

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 50/7

27 նոյեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Ին Վինո» ՍՊԸ 28.10.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 20.10.2015 թ-ի թիվ 5102173 ակտի դեմ:

«Ին Վինո» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

Համաձայն ՀՀ Ֆինանսների նախարարության Կենտրոնի ՀՏ 20.10.2015 թ-ի թիվ 5102173 ակտի՝ ՀՀ Ֆինանսների նախարարի 08.09.2015 թ-ի թիվ 5102173 հանձնարարագրով ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ աշխատակիցների կողմից «Ին Վինո» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում:

Համաձայն վերը նշված ակտի՝ 07.10.2015 թ-ին ժամը 14:59-ին, ք.Երևան, Սարյան 6տ-ք2 հասցեում գտնվող խանութից կատարվել է գնում 2800 դրամի չափով, 1 շիշ գինի 2800 դրամ արժեքով, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով: Վաճառողի կողմից գումարը մուտքագրվել է ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն է տրամադրվել: Տրամադրված կտրոնի վրա տեղեկատվությունը անգլերեն է եղել:

Արդյունքում տնտեսվարող սուբյեկտին «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով առաջադրվել է տուգանք 150.000 դրամի չափով:

Վերը նշված ակտի դեմ ընկերությունը առարկում է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշման 2-րդ հավելվածի 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ օրենքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում է դիտվում մասնավորապես,

1) որոշման N 1 հավելվածով սահմանված՝ ՀԴՄ կտրոնի վրա տպագրման ենթակա որևէ տեղեկատվության (տվյալի) բացակայությունը (բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի) կամ անընթեռնելիությունը (անգն աչքով կտրոնի վրա արտացոլված տվյալներն ընթերցելու անհնարիությունը) ... :

Համաձայն 20.10.2015 թ-ին կազմված թիվ 5102173 ակտի, տրամադրված ՀԴՄ կտրոնի վրա տեղեկատվությունը եղել է, սակայն՝ անգլերեն լեզվով:

ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշման 2-րդ հավելվածի 40-րդ կետի 1-ին ենթակետի վերլուծությունից կարելի է գալ այն հետևության, որ հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում է համարվում ոչ թե ՀԴՄ կտրոնի վրա տեղեկատվության անգլերեն լինելը, այլ որևէ տեղեկատվության /տվյալի/ բացակայությունը կամ անընթեռնելի լինելը: Հետևաբար, ընկերությունը ՀԴՄ-ների շահագործման կանոնների խախտման համար կարող էր ենթարկվել պատասխանատվության այն դեպքում, երբ առկա լինել ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշման 2-րդ հավելվածի 40-րդ կետի 1-ին ենթակետով ամրագրված դեպքերից որևէ մեկը՝ ՀԴՄ կտրոնի վրա բացակայելու տպագրման

ենթակա նույն որոշման 1-ին հավելվածի 13-րդ կետով սահմանված որևէ տեղեկատվություն (տվյալ) կամ այն լինելու անընթացումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ընկերությունը խնդրում է վերացնել ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 20.10.2015 թ-ի թիվ 5102173 ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 08.09.2015 թ-ի թիվ 5102173 հանձնարարագրի համաձայն «Ին Վինո» ՍՊԸ-ում իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 20.10.2015 թ-ի թիվ 5102173 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ավագ հարկային տեսուչ Հրայր Ղալթախյանի կողմից 07.10.2015 թ-ին ժամը 14:59-ին ք.Երևան, Սարյան 6տ-ք2 հասցեում գտնվող խանութից կատարվել է գնում 2800 դրամի չափով՝ 1 շիշ գինի 2800 դրամ արժեքով, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով: Վաճառողի կողմից գումարը մուտքագրվել է ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն է տրամադրվել: Ստուգմամբ պարզվել է, որ ընկերության 2013 թ-ի իրացումից հասույթը գերազանցել է 58.35 մլն դրամը: ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշման Հավելված 1-ով սահմանված 4-րդ կետի համաձայն ՀԴՄ-ի միջոցով տպագրվող կտրոնի վրա գրանցվող և գնորդին տեսանելի ինդիկատորի վրա արտացոլվող տեղեկությունները պետք է լինեն հայերեն: Տրամադրված կտրոնի վրա տեղեկատվությունն անգլերեն է եղել: Նույն որոշման Հավելված 2-ի 40-րդ կետի համաձայն օրենքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով կատարվել է ՀԴՄ-ների շահագործման կանոնների խախտում:

Արդյունքում Ակտով կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Ակտի 1-ին կետում նկարագրված գնման դիմաց տրամադրված ՀԴՄ կտրոնը, արձանագրեց, որ նշված ՀԴՄ կտրոնի վրա, ըստ էության, տպագրված է ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշման Հավելված 1-ի 13-րդ կետով սահմանված ՀԴՄ կտրոնի վրա տպագրման ենթակա տեղեկատվությունը (տվյալները): Պարզապես ՀԴՄ կտրոնի վրա գնված ապրանքի անվանումը նշված է անգլերեն լեզվով:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ չնայած ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշման Հավելված N 1-ի 4-րդ կետով հստակ սահմանված է, որ ՀԴՄ-ի միջոցով տպագրվող կտրոնի վրա գրանցվող և գնորդին տեսանելի ինդիկատորի վրա արտացոլվող տեղեկությունները պետք է լինեն հայերեն, սակայն քննարկվող դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ ՀԴՄ կտրոնում ապրանքի անվանումն անգլերեն լեզվով նշվելը պայմանավորված է եղել տեխնիկական բնույթի ծրագրային խնդիրներով:

Հանձնաժողովը գտնում է, որ Ակտի 1-ին կետում նշված խախտման փաստի առկայության համար անհրաժեշտ պայման է, որպեսզի այդ խախտումն ընկերության

կողմից կատարված լինի մեղավորությամբ, ինչը, սակայն, քննարկվող դեպքում առկա չէ, քանի որ ՀԴՄ կտրոնում ապրանքի անվանումն անգլերեն լեզվով նշվելը պայմանավորված է եղել բացառապես ծրագրային խնդիրներով՝ ընկերությունից անկախ հանգամանքների բերումով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 20.10.2015 թ-ի թիվ 5102173 ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

